այժմեան երիտասարդներն ինչպէս են խաղում կեանքի հետ (տես երես 284.) և վերջապէս՝ կիմանաս թէ՝ ինչ տարբերութիւն կայ Զամախեցի Հայի և ուրիշ քաղաքի Հայի մէջ ազգային և կրօնական գործոց և արարողութեանց վերաբերմամբ։

Զամախեցի Հայոց մի մեծ յատկութիւնն և առաւելութիւնն այն է, որ սիրում են քարոզ լսել, և հետաքրքրութեամբ կարդալ Սուրբ Գիրքը, առաւելապէս Սուրբ Աւետարանը, որը շատ անգամ գովել եմ, ըստ որում այս սէրը և հետաքրքրութիւնը ուրիշ երկրների հայերը չունին. զոր օրինակ՝ նոյն իսկ Ս. Էջմիածնայ վանքի շրջակայ և ամբողջ Արարատեան դաշտի հայերը։ Եւ երանի՜ թէ՝ ամենայն աշխարհի Հայք, և ամենայն Քրիստոնեայք ուշ դարձնէին Աւետարանի քարոզութեան վրայ, և ճշմարիտ քրիստոնէական եղբայրութեամբ մօտենային միմեանց, և Աւետարանի հոգւովն ապրէին։ Ըստ որում, ինչպէս քանիցս ասել եմ «Տեղագիր Գեղարքունի գաւառի» գրքիս մէջ՝ յերես 298,305,373,488,615,616, մեր ժողովուրդը կարծես մի տեսակ թմրութեան, անտարբերութեան և խարբալման մէջ է ըստ կրօնականին, (ի հարկէ չնորհիւ սուտ եղբարց) և կարծես Սուրբ Գրոց՝ Սամարացւոց համար ասածը (Տես Գործք Առաքելոց Ը. 15,16) թէ «Սամարացիք թէև մկրտուած էին, բայց Հոգին սուրբ չէին ընդունել», մեր ժողովրդեանն է յարմարել։

Այս թմրութեան զարթուցիչն ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ կիրակնօրեայ քարոզը. վասն զի՝ մեր՝ Աստուծոյ խօսքին կարօտ ժողովրդեանը՝ ոչ թէ մի բաժակի ցուրտ ջուրն է բաւական, որոյ վարձն անդամ չի կորչիլ, ասաց Քրիստոս, այլ ապրիլներ, գետեր և հեղեղներ, որ զովացնեն ծարաւած սրտերն։

Այս դեղ ու դարմանի և դեղատոմսի պատրաստելու համար լաւ բժիշկներ պէտք են. ո՞ւմ գործն է բժիշկներ և դեղեր և դեղարան և դեղատոմս պատրաստել, եթէ ոչ՝ բժշկապետի, որն այսօր Հայոց Հայրապետն է, ինչպէս և եղել են Նորա նախորդները։

Քարո՞զ, քարոզ պէտք են մեր թմրած ժողովրդեանը, մեծերին եկեղեցւոյ մէջ, իսկ փոքրներին դպրոցում, որ կարո-